ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 57-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ոստիկանության ծառայողների վերապատրաստում անցնելու կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

25.07.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
2025 թվականի հուլիսի 25 -ի
թիվ 57-Լ հրամանի

ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն իրավական ակտով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչությունում (այսուհետ՝ համայնքային ոստիկանություն) միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում նշանակվելու նպատակով ոստիկանության ծառայողների վերապատրաստման, ներառյալ՝ դրա համար անցկացվող մրցույթի (այսուհետ՝ վերապատրաստում) կարգը և պայմանները:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը համայնքային ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում կատարվում է բացառապես Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրում (այսուհետ՝ կրթահամալիր) վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:

3. Համայնքային ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում նշանակվելու համար վերապատրաստման հիմք է հանդիսանում կրթահամալիրում անցկացվող մրցույթը:

2. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4. Վերապատրաստման մրցույթը հայտարարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով, որով ստեղծվում է նաև ընդունող հանձնաժողով և հաստատվում է մրցույթի գործընթացի ժամանակացույցը:

5. Մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողները, բացառությամբ.

1) ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում, կրթահամալիրում հեռակա ուսուցման ձևով սովորողների, ինչպես նաև կրթահամալիրում պետական պատվերի շրջանակներում սովորողների.

2) 40 տարեկանը լրացած իգական և 50 տարեկանը լրացած արական սեռի ծառայողների:

6. Ծառայողի տարիքը հաշվարկվում է մրցույթի գործընթացի ժամանակացույցով սահմանված՝ մրցույթի ստուգումների և հարցազրույցի ժամկետի վերջին օրվա դրությամբ:

7. Ծառայողը մրցույթին մասնակցելու համար ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի միջոցով զեկուցագիր է ներկայացնում ներքին գործերի

նախարարության ոստիկանության պետ–ներքին գործերի նախարարի տեղակալին: Զեկուցագրին կցվում է ծառայողական բնութագիրը և ծառայողի կողմից ստորագրված իրազեկման թերթիկը՝ հույժ գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն չտրամադրելու կամ այդ թույլտվությունը դադարեցնելու իրավական հետևանքների, ինչպես նաև ուսումնառությունը սկսելուց հետո մեկ ամսվա ընթացքում թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ լիցենզավորված բժշկական կազմակերպությունում ստուգում (ափիոնային շարք, կաննաբինոիդներ և մեթամֆետամին) անցնելու պարտականության և այդ ստուգման դրական արդյունքի իրավական հետևանքների վերաբերյալ (համաձայն Ձևի):

8. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանումը մրցույթին մասնակցելու համար զեկուցագիր ներկայացրած ծառայողների վերաբերյալ նախապատրաստված նյութերը մրցույթի ստուգումների անցկացման համար մրցույթի գործընթացի ժամանակացույցով սահմանված ժամկետի սկզբից առնվազն յոթ աշխատանքային օր առաջ ուղարկում է ընդունող հանձնաժողովին:

9. Ծառայողները մրցույթի գործընթացի կազմակերպման և անցկացման համար յուրաքանչյուր ստուգման ձևի համար վճարում են 1500-ական (հազար հինգհարյուրական) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարները մուտքագրվում են կրթահամալիրի բանկային հաշվին:

10. Անկախ մրցույթին մասնակցելուց և դրա արդյունքից՝ վճարված գումարը հետ չի վերադարձվում:

11. Մրցույթի ստուգումներն անցկացվում են հայերենով:

12. Մրցույթի ստուգումներն են.

1) ֆիզիկական պատրաստականության ստուգումը.

2) մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգումը (թեստավորումը):

13. Ֆիզիկական պատրաստականության ստուգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստականության նորմատիվներին համապատասխան՝ ըստ բժշկատարիքային խմբերի:

14. Ընդունող հանձնաժողովն իրավունք ունի ծածկագրից օգտվող կամ ստուգման բնականոն ընթացքը խանգարող ծառայողին զրկելու տվյալ և հետագա ստուգմանը մասնակցելու իրավունքից:

15. Ստուգումների արդյունքները ծառայողներին հայտնվում են ստուգման օրը: Ծառայողն իրավունք ունի մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգման (թեստավորում) արդյունքները բողոքարկել ընդունող հանձնաժողովին՝ գնահատականը հայտնելու պահից 24 ժամվա ընթացքում: Բողոքարկման կարգը սահմանվում է ընդունող հանձնաժողովի կողմից:

16. Անհարգելի պատճառով ստուգման չներկայացած կամ անբավարար գնահատական ստացած ծառայողը զրկվում է հետագա ստուգմանը մասնակցելու իրավունքից:

17. Հարգելի պատճառով (փաստաթղթերով հաստատված) ստուգմանը չներկայացած ծառայողներին թույլատրվում է հանձնել այն, եթե ժամանակացույցով տվյալ ստուգման ձևի համար սահմանված ժամկետը չի ավարտվել:

18. Մրցույթի յուրաքանչյուր ստուգումից դրական միավորներ հավաքած ծառայողները անցնում են հարցազրույց:

19. Հարցազրույցի ընթացքում հարցազրույցի հանձնաժողովն ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված հարցաշարի միջոցով ստուգում է ծառայողների

անձնական որակները և արժանիքները, ընդհանուր հոգեբանական նկարագիրը, ներառյալ՝ ինքնատիրապետման, վարվեցողության, ունկնդրելու կարողության և հաղորդակցության հմտությունները, ինչպես նաև՝ ընդհանուր գիտելիքները:

20. Հարցազրույցի արդյունքներով, հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ յուրաքանչյուր ծառայողի համար կայացվում է դրական կամ բացասական որոշում: Ձայների հավասարության դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ձայնը: Բացասական որոշում կայացնելու դեպքում ծառայողը համարվում է մրցույթը չանցած:

21. Ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած են համարվում այն ծառայողները, որոնց նկատմամբ հարցազրույցի արդյունքներով կայացվել է դրական որոշում, և որոնք մրցույթի ստուգումներից հավաքած միավորների հանրագումարով զբաղեցրել են մրցույթի սահմանված տեղերը:

22. Հավասար միավորների դեպքում մրցույթում, ըստ հերթականության, առավելությունը տրվում է այն ծառայողներին՝

1) որոնք մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգումից (թեստավորում) ստացել են ավելի բարձր միավոր.

2) որոնց ավարտական փաստաթղթի գնահատականների թվաբանական միջինն ավելի մեծ է:

23. Ստուգումները հանձնած, սակայն մրցույթով չանցած ծառայողներին իրենց ցանկությամբ տրվում է ստուգումների արդյունքների մասին համապատասխան տեղեկանք:

24. Մրցույթով անցած ծառայողի հետ, մինչև նրան վերապատրաստման նպատակով կրթահամալիր գործուղելը, ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումը կնքում է ուսման համար պետության կողմից կատարված ծախսերի փոխհատուցման պայմանագիր:

25. Ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած ծառայողները Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի հրամանի հիման վրա ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հրամաններով գործուղվում են կրթահամալիր՝ վերապատրաստման:

26. Ուսումնառության մեկնարկից հետո ծառայողների վերապատրաստման դադարեցման դեպքում ընդունող հանձնաժողովի նախագահը կարող է ուսումնառության մեկնարկից ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում հրավիրել ընդունող հանձնաժողովի նիստ, և ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած կարող են համարվել նախկինում մրցույթով չանցած այն ծառայողները, որոնց նկատմամբ հարցազրույցի արդյունքներով կայացվել է դրական որոշում:

3. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

27. Վերապատրաստման տևողությունը 2 ամիս է:

28. Վերապատրաստման ուսումնական պլանը և առարկայական ծրագիրը մշակում է կրթահամալիրը՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության շահագրգիռ ստորաբաժանումների հետ համատեղ:

29. Վերապատրաստման ուսումնական պլանը հաստատվում է նախարարի կողմից, իսկ վերապատրաստման առարկայական ծրագիրը՝ կրթահամալիրի ռեկտորի կողմից:

30. Վերապատրաստում անցնող ծառայողների գործնական պարապմունքներն անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել Կրթահամալիրից դուրս:

31. Մրցույթով անցած ծառայողների նկատմամբ իրականացվում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքով նախատեսված՝ հույժ գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն տրամադրելու գործընթաց: Եթե մինչև մրցույթով անցած ծառայողներին վերապատրաստման գործուղելու մասին հրամանի ընդունումը ծառայողին չի տրամադրվում համապատասխան թույլտվություն կամ թույլտվության տրամադրումը մերժվում է, ապա նա չի գործուղվում վերապատրաստման: Եթե ծառայողին տրամադրված թույլտվությունը օրենքով նախատեսված կարգով դադարեցվում է մինչև վերապատրաստման ավարտը, ապա ծառայողի վերապատրաստումը դադարեցվում է:

32. Մրցույթով անցած ծառայողները ուսումնառությունը սկսելուց հետո մեկ ամսվա ընթացքում լիցենզավորված բժշկական կազմակերպությունում անցնում են թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ ստուգում (ափիոնային շարք, կաննաբինոիդներ և մեթամֆետամին), և այդ ստուգման դրական արդյունքի դեպքում ծառայողների վերապատրաստումը դադարեցվում է:

33. Վերապատրաստումը հաջողությամբ չավարտած ծառայողները քրեական ոստիկանությունում պաշտոնի չեն նշանակվում և շարունակում են մնալ իրենց զբաղեցրած պաշտոնում, իսկ հաստիքի կրճատված լինելու դեպքում ծառայողի հետագա իրավական կարգավիճակը որոշվում է օրենքով սահմանված կարգով:

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ես՝ _____ս, սույնով հավաստում եմ, որ
անուն, հայրանուն, ազգանուն

տեղեկացված եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ընդունվելու դեպքում իմ նկատմամբ իրականացվելու են «Պետական գաղտնիքի մասին» օրենքով նախատեսված՝ հույժ գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն տրամադրելու նպատակով ստուգողական միջոցառումներ, և եթե մինչև մրցույթով անցած ծառայողներին վերապատրաստման գործուղելու մասին հրամանի ընդունումն ինձ չտրամադրվի համապատասխան թույլտվություն կամ թույլտվության տրամադրումը մերժվի, ապա ես չեմ գործուղվելու վերապատրաստման, իսկ եթե ինձ տրամադրված թույլտվությունը օրենքով նախատեսված կարգով դադարեցվի մինչև վերապատրաստման ավարտը, ապա իմ վերապատրաստումը դադարեցվելու է:

Տեղեկացված եմ նաև, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ընդունվելու դեպքում ուսումնառությունը սկսելուց հետո մեկ ամսվա ընթացքում պարտավոր եմ լինելու լիցենզավորված բժշկական կազմակերպությունում իմ հաշվին անցնել թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ ստուգում (ափիոնային շարք, կաննաբինոիդներ և մեթամֆետամին), և այդ ստուգման դրական արդյունքի դեպքում իմ վերապատրաստումը դադարեցվելու է:

_____	_____	_____
ստորագրություն	անուն, հայրանուն, ազգանուն,	ամսաթիվ